ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

«2013 թ. դեկտեմբերի 13-ի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև զինվորական սուրհանդակափոստային կապի ոլորտում համագործակցության մասին համաձայնագրում փոփոխություն կատարելու մասին» արձանագրության կնքման նպատակահարմարության վերաբերյալ

Վերոնշյալ Արձանագրության նախագիծը կազմվել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից՝ հաշվի առնելով 2013թ. դեկտեմբերի 2-ի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև զինվորական սուրհանդակափոստային կապի բնագավառում համագործակցության մասին համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) 10-րդ հոդվածը:

Արձանագրությամբ նախատեսվում է փոփոխություններ մտցնել Համաձայնագրում և դրա Հավելված՝ Հրահանգում, որով սահմանվում է զինվորական սուրհանդակափոստային կապի ցանցով զինվորական նամակագրության առաքման կարգը:

Համաձայնագրով կարգավորվում են մի Կողմի պետության տարածքում տեղակայված զինվորական կազմավորումների համար մյուս Կողմի պետության տարածքից զինվորական նամակագրության փոխանցման հետ կապված հարցերը:

Համաձայնագրի 3-րդ հոդվածով նախատեսված է, որ այն ուժի մեջ մտնելուց հետո 2 ամսվա ընթացքում Կողմերը՝ նշանակում են լիազոր մարմիններ Համաձայնագրի իրականացման նպատակով:

Արձանագրությամբ փոփոխություն է կատարվում Համաձայնագրի 3-րդ հոդվածում, որի համաձայն Կողմերը նշանակում են լիազոր մարմիններ.

Հայկական կողմից՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը և Ռուսական կողմից՝ Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարարությունը:

Արձանագրությամբ կատարվող փոփոխությունների նպատակն է հստակեցնել և ավելի դյուրին դարձնել Համաձայնագրի իրագործումը:

Արձանագրության նախագիծը ամրագրում և Համաձայնագրով սահմանված կարգով ձևակերպում է Համաձայնագրում կատարվող փոփոխությունները:

Հաշվի առնելով վերոնշյալը ՀՀ պաշտպանության նախարարությունը նպատակահարմար է համարում սկսել Արձանագրության կնքման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերը:

ՀՀ պաշտպանության նախարար

Վ.ՍԱՐԳՍՅԱՆ